*Ղեկավարվելով Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջներով, հիմք ընդունելով Ալեքսանդր Գրիգորյանի 2022 թվականի ապրիլի 18-ի դիմումը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2022 թվականի մայիսի 17-ի թիվ 20 մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցն ու հողամասը կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2022 թվականի հուլիսի 13-ի N 1187 գրավոր առաջարկությունը և Ալեքսանդր Գրիգորյանի կողմից տրված 2022 թվականի հուլիսի 14-ի թիվ 589 գրավոր համաձայնագիրը.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Հարավային թաղամասի Ռ.Միքայելյան փողոց 41 հասցեում գտնվող՝ 29.4քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:*

*2.Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Ռ.Միքայելյան փողոց 41 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 29.4քմ մակերեսով ավտոտնակը՝ /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 02062022-07-0174, գաղտնաբառ՝ C9BDT4IJ8HDK/ գինը սահմանել 58000 /հիսունութ հազար/ դրամ և նույն հասցեում գտնվող ավտոտնակի համար առանձնացված 29.4քմ մակերեսով հողամասը 131000 /մեկ հարյուր երեսունմեկ հազար/ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած անձ՝ Երևան քաղաքի Շիրվանզադե փողոցի 2 շենքի թիվ 39 բնակարանի բնակիչ Ալեքսանդր Գրիգորյանին (այսուհետ գնորդ):*

*3.Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում որոշման 2-րդ կետով ավտոտնակի համար սահմանված գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը թիվ*

900125001140 գանձապետական հաշիվներին:

4.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

22 հուլիսի 2022թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*22 հուլիսի 2022թվականի N 710*

## *ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի N 07-Ն որոշման հավելվածը.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Տրամադրել թույլտվություններ՝համաձայն հավելվածի.*
*1) օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի՝ 14 /տասնչորս/ հատ,*
*2) օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի՝13 /տասներեք/ հատ,*
*3) արտաքին գովազդ տեղադրելու՝ 4 /չորս/ հատ:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*22 հուլիսի 2022թ.*
*ք.Հրազդան*

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2022 թ. հուլիսի 22-ի
N 710 որոշման

# ՑՈՒՑԱԿ
# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպության անվանումը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | ԱՁ Մելանյա Դավթյան | Կոտայքի մարզ, գյուղ Քաղսի, 8-րդ փողոց, տուն 20 | Կոտայքի մարզ, գյուղ Քաղսի, 1-ին փողոց, 50/1 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 2. | ԱՁ Մելանյա Դավթյան | Կոտայքի մարզ, գյուղ Քաղսի, 8-րդ փողոց, տուն 20 | Կոտայքի մարզ, գյուղ Քաղսի, 1-ին փողոց, 50/1 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակներ փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 3. | ԱՁ Համեստ Միքայելյան | ք.Հրազդան, Մ/Շ 207/21 | ք.Հրազդան,Երևանյան խճուղի 17 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 4. | ԱՁ Համեստ Միքայելյան | ք.Հրազդան, Մ/Շ 207/21 | ք.Հրազդան,Երևանյան խճուղի 17 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակներ փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 5. | ԱՁ Լևոն Տիգրանյան | ք.Հրազդան, Շինարարների 25 | ք.Հրազդան, Սպանդարյան փողոց, Աղյուրակ հանրախանութ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 6. | ԱՁ Լևոն Տիգրանյան | ք.Հրազդան, Շինարարների 25 | ք.Հրազդան, Սպանդարյան փողոց, Աղյուրակ հանրախանութ | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակներ փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 7. | ԱՁ Նազիկ Մարգարյան | ք.Հրազդան, Շահումյան 59 | ք.Հրազդան, Շահումյան 59 առևտրի օբյեկտ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 8. | ԱՁ Նազիկ Մարգարյան | ք.Հրազդան, Շահումյան 59 | ք.Հրազդան, Շահումյան 59 առևտրի օբյեկտ | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակներ փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 9. | ԱՁ Ջուլիետա Սուքիասյան | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, 12/9 | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, շենք 20, 1-ին հարկ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 10. | ԱՁ Ջուլիետա Սուքիասյան | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, 12/9 | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, շենք 20, 1-ին հարկ | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակներ փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 11. | ԱՁ Արմեն Եսայան | ք.Հրազդան, Սպանդարյան փողոց, տուն 36 | ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 12-րդ դպրոցին հարող տարածք | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 12. | ԱՁ Արմեն Եսայան | ք.Հրազդան, Սպանդարյան փողոց, տուն 36 | ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 12-րդ դպրոցին հարող տարածք | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 13. | ԱՁ Այվարդ Հայրապետյան | Կոտայքի մարզ. գյուղ Սոլակ, 10-րդ թաղամաս, տուն 19 | Կոտայքի մարզ. գյուղ Սոլակ, 10-րդ թաղամաս, տուն 19 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 14. | ԱՁ Այվարդ Հայրապետյան | Կոտայքի մարզ.գյուղ Սոլակ, 10-րդ թաղամաս, տուն 19 | Կոտայքի մարզ.գյուղ Սոլակ, 10-րդ թաղամաս, տուն 19 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 15. | ԱՁ Անուշ Նիկողոսյան | ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, 42/26 | ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, 32/07 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 16. | ԱՁ Անուշ Նիկողոսյան | ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, 42/26 | ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, 32/07 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 17. | ԱՁ Լևոն Գևորգյան | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 62/13 | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 201 շենք 1-ին հարկ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 18. | ԱՁ Լևոն Գևորգյան | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 62/13 | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 201 շենք 1-ին հարկ | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 19. | ԱՁ Եղյազար Մխիթարյան | ք.Աբովյան, Երիտասարդական փողոց, 13/3 | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Բաղրամյան 5-րդ փողոց, 1-ին երթուղի N 2 խանութ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 20. | ԱՁ Հայկանուշ Զաքյան | Կոտայքի մարզ, գյուղ Արզական | ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, Տիգրան Մեծի փողոց թիվ 9 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի դեկտեմբերի 31-ը` 2-րդ կիսամյակի համար |
| 21. | ԱՁ Հայկանուշ Զաքյան | Կոտայքի մարզ, գյուղ Արզական | ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, Տիգրան Մեծի փողոց թիվ 9 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի դեկտեմբերի 31-ը` 2-րդ կիսամյակի համար |
| 22. | ԱՁ Հասմիկ Հովհաննիսյան | Կոտայքի մարզ, գյուղ Սոլակ, 10-րդ թաղամաս, տուն 26 | Կոտայքի մարզ, գյուղ Սոլակ, 1-ին փողոց, 49/2 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 23. | ԱՁ Հասմիկ Հովհաննիսյան | Կոտայքի մարզ, գյուղ Սոլակ, 10-րդ թաղամաս, տուն 26 | Կոտայքի մարզ, գյուղ Սոլակ, 1-ին փողոց, 49/2 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 24. | ԱՁ Գրիգոր Գրիգորյան | ք.Հրազդան, Ջրառատ գյուղ, տուն 6 | ք.Հրազդան, Ջրառատ գյուղ, 4-րդ փողոց, տուն 6 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 25. | ԱՁ Գրիգոր Գրիգորյան | ք.Հրազդան, Ջրառատ գյուղ, տուն 6 | ք.Հրազդան, Ջրառատ գյուղ, 4-րդ փողոց, տուն 6 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 26. | ԱՁ Երվանդ Բաղանդույան | ք.Հրազդան, Ավետիսյան փողոց, տուն 7 | ք.Հրազդան, Երևանյան փողոց 9/2 1-ին հարկ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 27. | ԱՁ Երվանդ Բաղանդույան | ք.Հրազդան, Ավետիսյան փողոց, տուն 7 | ք.Հրազդան, Երևանյան փողոց 9/2, 1-ին հարկ | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 28. | ԱՁ Գեևորգի Շամխալյան | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 89/9 | ք.Հրազդան, Զ.Անդրանիկի պողոտա 107/3 | արտաքին գովազդի տեղադրում | 1 քառ/մ | 2022 թվականի հուլիս ամսվա համար |
| 29. | ԱՁ Ալեք Հովհաննիսյան | ք.Հրազդան, Ռ.Միքայելյան 2/32 | ք.Հրազդան, Սպանդարյան 10 | արտաքին գովազդի տեղադրում | 2 քառ/մ | 2022 թվականի հուլիս ամսվա համար |
| 30. | ԱՁ Նելլի Մերոպյան | գյուղ Փարաքար, Երևանյան փողոց, 2-րդ նրբանցք,տուն 9 | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Զ.Անդրանիկի պողոտա 94 | արտաքին գովազդի տեղադրում | 1 քառ/մ | 2022 թվականի հուլիս ամսվա համար |
| 31. | ԱՁ Եպրաքսյա Մխիթարյան | ք.Աբովյան, Երիտասարդական փողոց, 13/3 | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Բաղրամյան 5-րդ փողոց, 1-ին նրբանցք N 2 խանութ | արտաքին գովազդի տեղադրում | 2 քառ/մ | 2022 թվականի հուլիս ամսվա համար |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*25 հուլիսի 2022թվականի N 711*

## *ՇԱՀԵՆ ԱՐՄԵՆԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 4-րդ հոդվածի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 2-ի N98 որոշումը և 2022 թվականի հուլիսի 14-ի անշարժ գույքն աճուրդով վաճառելու մասին N1 արձանագրությունը.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 318 հասցեում գտնվող կիսակառույց բազմաբնակարան բնակելի շենքը և դրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայական N 16052022-07-0193, գաղտնաբառ՝ KE5QJUBJ2VPF) 23 000 000 (քսաներեք միլիոն) դրամ արժեքով օտարել Երևան քաղաքի Շիրազի փողոց Գ-1 թաղամաս թիվ 34 տան բնակիչ Շահեն Արմենի Հակոբջանյանին:*
*2.Աճուրդով ձեռք բերված Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 318 հասցեում գտնվող կիսակառույց բազմաբնակարան բնակելի շենքի և դրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի համար կնքել գույքի առուվաճառքի պայմանագիր: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:*
*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*25 հուլիսի 2022թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*25 հուլիսի 2022թվականի N 712*

### *ՄԻԱՎՈՐՎԱԾ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՌԵՎՏՐԻ ՄՐԱՀԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով,Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ, 8-րդ բաժինների պահանջներով, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 3-րդ կետով և որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնով,2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգով, հիմք ընդունելով 2022 թվականի մարտի 2-ին «Հաբշին նախագիծ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված շինության հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2022EVWDRQ ծածկագիրը և Քրիստինե Շահվալադյանի 2022 թվականի մարտի 2-ի դիմումը.*

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 218 շենքի թիվ 17 բնակարանի բնակիչ Քրիստինե Սամոնի Շահվալադյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ N 25072018-07-0028, ծածկագիր՝ ENIDUWBMYAAA, N 13102017-07-0035, ծածկագիր՝ XMYM2VJ6UI5Y) Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 14-րդ փողոց 34/1 և թիվ 34 հասցեներում գտնվող միավորված գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 14-րդ փողոց 34:*

*2.Օրինական ճանաչել Քրիստինե Սամոնի Շահվալադյանի կողմից Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 14-րդ փողոց 34 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ N 25072018-07-0028, ծածկագիր՝ ENIDUWBMYAAA, N 13102017-07-0035, ծածկագիր՝ XMYM2VJ6UI5Y) բնակավայրերի բնակելի և*

հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 249.61քմ արտաքին մակերեսով առևտրի սրահը՝ օրինականացման վճարը սահմանել 835 200 (ութ հարյուր երեսունհինգ հազար երկու հարյուր ) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի՝ թիվ 900125001504 գանձապետական հաշվին:

3.Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 14-րդ փողոց 34/1 հասցեում գտնվող 69.6քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատումից փոփոխել հասարակականի:

4.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

6.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

25 հուլիսի 2022թ.
ք.Հրազդան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

### *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*25 հուլիսի 2022թվականի N 713*

### *ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի N 07-Ն որոշման հավելվածը.*

### *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Տրամադրել թույլտվություններ՝համաձայն հավելվածի.*
*1) օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի՝ 5 /հինգ/ հատ,*
*2) օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի՝ 4 /չորս/ հատ,*
*3) հանրային սննդի կազմակերպման և իրականացման՝ 2 /երկու/ հատ,*
*4) արտաքին գովազդ տեղադրելու՝ 2 /երկու/ հատ:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*25 հուլիսի 2022թ.*
*ք.Հրազդան*

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2022թ. հուլիսի 25-ի
N 713 որոշման

ՑՈՒՑԱԿ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպության անվանումը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | ԱՁ Մանիշակ Կոստանյան | ք.Հրազդան< Չարենց թաղամաս, տուն 107 | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 55 շենք 1-ին հարկ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 2. | ԱՁ Մանիշակ Կոստանյան | ք.Հրազդան< Չարենց թաղամաս, տուն 107 | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 55 շենք 1-ին հարկ | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 3. | ԱՁ Մանուկ Առաքելյան | Կոտայքի մարզ. գյուղ Սոլակ, 1-ին թաղամաս, տուն 29 | Կոտայքի մարզ. գյուղ Սոլակ, 1-ին թաղամաս, 44 հողատարածք | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 4. | ԱՁ Մանուկ Առաքելյան | Կոտայքի մարզ. գյուղ Սոլակ, 1-ին թաղամաս, տուն 29 | Կոտայքի մարզ. գյուղ Սոլակ, 1-ին թաղամաս, 44 հողատարածք | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 5. | ԱՁ Հասմիկ Մանուկյան | ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, 45/23 | ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, 71 շենք N 20 տնակի դիմաց | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 6. | ԱՁ Հասմիկ Մանուկյան | ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, 45/23 | ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, 71 շենք N 20 տնակի դիմաց | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 7. | ԱՁ Միասուշ Ապոյան | ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, 45/23 | ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, 42 շենք, 1-ին հարկ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 8. | ԱՁ Միասուշ Ապոյան | ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, 45/23 | ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, 42 շենք, 1-ին հարկ | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 9. | <<ԴԻ ԹԻ ԷՄ>> ՍՊԸ | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, 2Մ 6-րդ մասնաշենք, 61 սենյակ | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, Զ.Անդրանիկի պողոտա. Թիվ 1 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների համար |
| 10. | ԱՁ Հարություն Մկրտչյան | Կոտայքի մարզ. գյուղ Սոլակ, 10-րդ թաղամաս, տուն 14 | Կոտայքի մարզ. գյուղ Սոլակ, Հրազդանի անտառտնտեսության մասնաճյուղի Արզականի անտառապետության 8-րդ քառակուսի 21-րդ տեղամաս | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների համար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 11. | ԱՁ Մերի Վարդանյան | ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, 20/21 | ք. Հրազդան,Կենտրոն [illegible]ամաս, Օգոստոսի 23, թիվ 18 | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 12 | ԱՁ Նորայր Ավագյան | ք.Հրազդան, Չարենցի 9 | ք.Հրազդան, Ջ.Անդրանիկի պողոտա 6 | արտաքին գովազդի տեղադրում | 2 քառ/մ | 2022 թվականի հուլիս ամսվա համար |
| 13. | <<32 դենտ>> ՍՊԸ | ք.Հրազդան, Ջրառատ գյուղ, 4-րդ փողոց, տուն 11 | ք.Հրազդան, Ջ.Անդրանիկի պողոտա 35/1 | արտաքին գովազդի տեղադրում | 1 քառ/մ | 2022 թվականի հուլիս ամսվա համար |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*26 հուլիսի 2022թվականի N 714*

*ԽԱՆՈՒԹԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Հովհաննես Պրտավյանի 2022 թվականի հուլիսի 21-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ</u>՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 76 շենքի թիվ 41 բնակարանի բնակիչ Հովհաննես Պրտավյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 2144901, տրված՝ 2006 թվականի մարտի 3-ին) Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի թիվ 32 շենքի 1-ին հարկում գտնվող խանութին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, 32 շենք, 32/3 խանութ:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*26 հուլիսի 2022թ.*
*ք.Հրազդան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*26 հուլիսի 2022թվականի N 715*

## *ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Դիմիտրիոս Բաղալիդիսի լիազորված անձ Սարգիս Եղիազարյանի 2022 թվականի հուլիսի 22-ի դիմումը.*

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Հայաստանի Հանրապետության քաղաքացի Դիմիտրիոս Բաղալիդիսին ժառանգության իրավունքով փոխանցված /ՀՀ Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտարի կողմից 2022 թվականի հուլիսի 11-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված գրանցամատյանում՝ N 1746, ժառանգական գործ N 207/ Հրազդան քաղաքի Ա.Խաչատրյան փողոց 21 շենքին հարող տարածքում գտնվող ավտոտնակին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Ա.Խաչատրյան փողոց 21/3:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*26 հուլիսի 2022թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*26 հուլիսի 2022թվականի N 716*

## *ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ</u>՝*

*1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 2642801, տրված՝ 2009 թվականի հոկտեմբերի 7-ին) Հրազդան քաղաքի Մարշալ Բաղրամյան թաղամասի հիվանդանոցին հարող տարածքում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Պուրակային փողոց 34/1:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*26 հուլիսի 2022թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*26 հուլիսի 2022թվականի N 717*

### *ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Վանուշ Մանուկյանի 2022 թվականի հուլիսի 21-ի դիմումը.*

### *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Կոտայքի մարզի Աղավնաձոր գյուղի 4-րդ փողոցի թիվ 12ա տան բնակիչ Վանուշ Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող / անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 21072022-07-0082, գաղտնաբառ՝ HFIGMVXWQXPE/ Հրազդան քաղաքի Միկրոշրջան Գ-3 թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Պուրակային փողոց 15:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*26 հուլիսի 2022թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*26 հուլիսի 2022թվականի N 718*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 300.0քմ մակերեսով 07-001-0109-0002 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 3-րդ փողոց 1/5:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*26 հուլիսի 2022թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# ՈՐՈՇՈՒՄ

*27 հուլիսի 2022թվականի N 719*

## ՄԱՐԻԱՄ ՏԻԳՐԱՆԻ ՎԱՆՈՅԱՆԻՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով Մարիամ Վանոյանի դիմումը և Հրազդանի համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 12-ի թիվ 19 արձանագրությունը.*

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

*1. Թույլատրել Մարիամ Տիգրանի Վանոյանին կնքել իր անչափահաս երեխաներ՝ Ալեքս /ծնված՝03.06.2012թ./ և Էլեն /ծնված՝10.10.2017թ./ Վարդանի Կարապետյաններին պատկանող Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծաղկունք համայնքի 6-րդ փողոցի թիվ 5 հասցեում գտնվող 0,3842հա բնակավայրերի նպատակային նշանակություն ունեցող բնակելի կառուցապատման հողամասի, 103,85քմ ընդհանուր մակերեսով բնակելի տան, 81,1քմ ընդհանուր մակերեսով անասնաշենքի, 129,95քմ ընդհանուր մակերեսով ավտոտնակի, 130,85քմ ընդհանուր մակերեսով օժանդակ շինության 1/12/մեկ տասներկու/ բաժնով յուրաքանչյուրին պատկանող բաժնեմասի օտարումը:*

*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարիամ Տիգրանի Վանոյանին իրազեկելու հաջորդ օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*27 հուլիսի 2022թ.*
*ք.Հրազդան*